



# Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ՀԱՄԱՐՈՒՄ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2013թ. № 2 (275)

www.syuniacyerkir.am

Ուստի հողեղեն մեղավորիս էլ մարդասիրաբար ողորմիր, Հիսուս...

ՍԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՏԻ, ՄԱՏՅԱՆ ՈՐԲԵՐՈՒԹՅԱՆ, ԲԱՆ ԶԱ, Գ



22 հունվարի 2013թ., Սյունիք

## Կիրականացնեն դիտորդական առաքելություն

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ-2013

2013թ. փետրվարի 18-ին կայանալիք ՀՀ նախագահի ընտրությունում, ըստ ԿԸՀ կայքի, դիտորդական առաքելություն կիրականացնեն հինգ միջազգային եւ ինը տեղական դիտորդական կազմակերպություններ: Նախնական տվյալներով փետրվարի 18-ին 1261 տեղական դիտորդ կիստեղի ընտրական գործընթացին: Եթե համեմատենք նախորդ՝ 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների դիտորդների թվի հետ, ապա այս ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնողների թիվը զգալի զիջում է: ՀՀ վարչապետի հրավերով Հայաստան են ժամանել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները, որոնցից երկուսը՝ Մերթեք Լաուբյերգն ու Յորգեն Բաքլունդը Սյունիքում էին: Նրանք այցելեցին թիվ 38 ընտրատարածքային ընտրական համայնաժողով, Կապանի քաղաքապետարան, «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները գնահատելու են նախագահական ընտրության համապատասխանությունը ԵԱՀԿ առջեւ ստանձնած պարտավորություններին, միջազգային այլ չափանիշներին եւ ՀՀ օրենսդրությանը: Ըստ մեր ունեցած տվյալների՝ Սյունիքի մարզն ընդգրկող N37 եւ N38 ընտրատարածքներում դիտորդական առաքելություն կիրականացնի նաեւ Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամը: «Մերուր կանանց ռեսուրս կենտրոն» եւ «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ներն իրականացնում են «Դիտելով, սովորելով եւ դիտարկելով» խթանել երիտասարդների մասնակցությունը նախագահական ընտրություններին՝ նախաձեռնություններ:

Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի կողմից կվերապատրաստվի 70 երիտասարդ (18-30 տարեկան), որից 10-ն արդեն հավատարմագրվել է ԿԸՀ կողմից: Հավատարմագրված երիտասարդները փետրվարի 18-ին կայանալիք նախագահական ընտրության ժամանակ դիտորդություն կիրականացնեն Սյունիքի մարզի 6 քաղաքային եւ 17 գյուղական համայնքների 70 ընտրատեղամասում:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հանդեպ, մինչդեռ, ունենք անվստահության հիմքեր: Նախորդ ընտրություններին եւս բազմաթիվ անգամ կասկած ենք հայտնել տեղական կազմակերպությունների նմանատիպ առաքելության վերաբերյալ: Մինչ օրս ոչ մի դիտորդական կազմակերպություն իր զեկույցն այդպես էլ մեզ չի տրամադրել եւ չի հրապարակել: Տեղական կազմակերպություններն արդարանում են, թե իրենք իրավասու չեն հրապարակել այդ զեկույցները: Եվ այսքանով ամեն ինչ ավարտվում է: Թերեւս այս պատճառով է, որ մեզանում կա անվստահություն դիտորդական կազմակերպությունների եւ դիտորդների հանդեպ: Ինչ վերաբերում է միջազգային դիտորդական կազմակերպություններին, ապա այսօր էլ կարող ենք գրեթե ճշգրտորեն պատկերացնել նրանց վերջնական զեկույցի տեքստը...

ԱՐԱՎՆԻ ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆ

## Բացառիկ հնարավորություն. մեր նախագահը կարող է եւ պետք է բուլորիս նախագահը լինի

ՀԱՅԱՏՔ ԱՅՈՒՆԻՔԻՑ

Եվ եղավ այնպես, որ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության շեմին երկրի քաղաքական դաշտն ամայացած-անապատացած գտանք ու հիմնական քաղաքական դերակատարներին՝ երկրի թիվ 1 պետական ու քաղաքական իրադարձությունից օտարված, հեռացած, իրենց հետեւորդներին ու հավատացողներին անորոշության մատնած:

Նաեւ այնպես եղավ, որ նախագահի պաշտոնին երկրորդ անգամ հավակնող Սերժ Սարգսյանի հետ նախագահի թեկնածու առաջադրվեց եւս յոթ հոգի, ովքեր ոչ մի չափանիշով (ընտրական ռեսուրսի առումով) մրցակից չեն գործող նախագահին, ովքեր առաջադրման առաջին իսկ րոպեներից հորինովի-հնարովի թեկնածուի-մրցակցի հորջորջում ստացան: Նրանցից ոմանք, որքան էլ տարօրինակ է, ընտրությունից դեռեւս մեկ ամիս առաջ հայտարարեցին (ու շարունակում են հայտարարել), որ իրենք չեն հաղթելու, հաղթելու է Սերժ Սարգսյանը, որ իրենք քարոզարշա-

վի դուրս չեն գալու՝ դրանով իսկ հավաստելով անլուրջ վերաբերմունքն իրենց մոր կարգավիճակի ու համապետական այդ կարելու միջոցառման հանդեպ: Թեկնածուներից ոմանք էլ, ակնհայտորեն ունենալով ընտրողների նվազագույն աջակցություն, շարունակում են հայտարարել, որ անպայման հաղթելու են՝ դրանով իսկ հավաստելով բեմական գործի իրենց՝ վաղնջական ժամանակներից եկող կարգավիճակը եւ դառնալով ծիծաղելի (եթե ոչ ողորմելի):

Շարունակությունը՝ էջ 4

## ՀՀԿ-ԲՀԿ սերտ համագործակցությունը նոր դրսեւորումներ է ունենում

ԲՀԿ-ի սյունիքյան տղերքը խոլապար են բռնել ՀՀԿ-ի ենթաշտաբերի մուտքերի առջեւ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՍԱՆՐՈՒՔ

ԲՀԿ-ի հայտնի բեմադրությունից հետո մի փոքր հետաքրքիր դարձավ, թե փետրվարի 18-ի ընտրության ժամանակ ինչ վարքագիծ են դրսեւորելու այդ կուսակցության մեծ ու փոքր սպասավորները: Բանն այն է, որ շատ հաճախ (եթե ոչ միշտ) նրանց խոսքն ու վարքը համեմատելի չեն լինում: Դա առավել ցայտուն (արդեն քանիցս) երեւացել է ԲՀԿ-ի սյունիքյան կառույցներում, ինչի փայլուն վկայությունը 2012թ. ՏԻՄ ընտրություններն էին: Այդ ժամանակ ԲՀԿ-ն, հատկապես չմոտոպոլացված համայնքներում, ամեն ինչ արեց, որ ՀՀԿ-ն այդ համայնքներում նույնպես տեր դառնա:

Փետրվարի 18-ի նախօրյակին, այսօր արդեն կարող ենք փաստել, Սյունիքում այդ առումով ոչինչ չի փոխվել: ԲՀԿ-ի տեղական կառույցների մեծ մասը, հեզությամբ ու առանց խոնջանքի,

լծվել է ՀՀԿ-ի ճոճաջող սայլին:

Գորիսի մասին, իհարկե, ոչինչ չենք կարող ասել: Այնտեղ ԲՀԿ չի եղել ու չկա: Աժ ընտրությունների ժամանակ այդ կուսակցության շտաբում հանգրվանած տղերքը՝ նախկին խոհարար, գործող տաքսիստ եւ այլն, օրավարձով աշխատողներ էին եւ ՀՀԿ-ի կողմից վարձակալված անձինք: Ուշագրավն այն է, որ ԲՀԿ-ի գորիսյան գրասենյակի վրա այլեւս փողփողում է ՀՀԿ-ի դրոշը:

Այլ է վիճակը Սիսիանում: 2012թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ ՀՀԿ-ն իր (շատ թե քիչ) երեւելի ներկայացուցիչներին չարտեց լուսանցք եւ Սիսիանի քաղաքապետ նշանակեց ԲՀԿ-ական Աղասի Հակոբջանյանին, ով այդ տարվա մայիսյան ընտրություններում Սիսիանի քաղաքական դաշտից վճռել էր ՀՀԿ-ին: Եվ ուրեմն՝ երկրորդ անգամ Սիսիանի քաղաքապետ նշանակվելու

Շարունակությունը՝ էջ 2



Աղասի Հակոբջանյան, ԲՀԿ Սիսիանի կառույցի ղեկավար



Կամո Աբրահամյան, ԲՀԿ Կապանի կառույցի ղեկավար

## ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար պարոն Արթուր Բաղդասարյանին

### ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանին

#### ՆԱՍԱԿ

**Հարգարժան պարոնայք**  
Վերջերս մամուլում մի շարք հրապարակումներ եղան, ըստ որոնց՝ Հայաստանը (մասնավորապես Սյունիքի մարզը) եւ Իրանը (մասնավորապես Արեւելյան Ադրբեջան նահանգը) պատրաստվում են ստորագրել ինչ-որ համաձայնագիր (հուշագիր), որով Սյունիքի մարզը հինգ տարով վարձակալությանը արտավայրեր կտրամադրի Արեւելյան Ադրբեջանից մի քանի հազար գլուխ մանր ու խոշոր եղջերավոր անասունների արածեցման համար: «Օրեր» եվրոպական անկախ ամսագիրը եւ Asbarez.com-ը հունվարի 16-ի իրենց համարներում նշում են, որ նույն օրը Թավրիզում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ու Իրանի Արեւելյան Ադրբեջան նահանգի նահանգապետ Ալիեզա Բեյգի կողմից արդեն ստորագրվել է ինչ-որ հուշագիր:

Սոցիալական ցանցերը ողողված են այս նյութով, ծավալվել են լայնածավալ քննարկումներ: Սեր եւ հանրության լայն շերտի շրջանում առաջացել է դժգոհություն եւ մտավախություն, որ սա կարող է իսկապես իրականություն լինել, քանի որ մենք մեր իրականությունից չենք հե-


ռանում. եթե ՀՀ կառավարությունը պատրաստ է որոշում ընդունել Քաջարան գյուղը տարհանելու վերաբերյալ, ապա այս հարցին, միանշանակ առանց հետեւանքների մասին մտածելու ու կշռադատելու, կարող է լուծում տալ:

Անհասկանալի է նաեւ, թե ինչու ձեր ղեկավարած կառույցները մինչ օրս չեն անդրադարձել սույն հարցին եւ չեն հայտնել իրենց դիրքորոշումը կնքվող հուշագրի վերաբերյալ:

Ողջունում ենք հայ-իրանական տնտեսական համագործակցությունը, սակայն միեւնույն ժամանակ հասկանում ենք, որ նախաձեռնած պետք է հայ գյուղացու համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ ստեղծել իր գործով զբաղվելու համար, հետո նոր մտածել Իրանի կամ այլ պետության հետ համագործակցության մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը, խնդրում ենք հայտնել ձեր կարծիքը. արդյո՞ք այս հուշագրի ստորագրումը չի սպառնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը: Եթե ոչ, ապա խնդրում ենք հիմնավորել:

Եթե միանում եք մեր մտահոգություններին, ապա առաջարկում ենք անհապաղ հանդես գալ հայտարարությամբ եւ կտրուկ քայլեր ձեռնար-



ԳՈՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ



ԳՈՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

կել այս գործընթացը կասեցնելու համար:

Միեւնույն ժամանակ կոչ ենք անում ՀՀ կառավարությանը՝ ձեռնպահ մնալ Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ նմանատիպ ցանկացած որոշում կայացնելուց, առավել եւս՝ առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու եւ խնդիրը լրիվ ու բազմակողմանի ուսումնասիրելու, որեւէ հուշագիր կամ պայմանագիր չպետք է կնքվի ՀՀ պետական կառավարման

եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Լրացուցիչ տեղեկացում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն ստույգ եւ հավաստի տեղեկատվություն ստանալու ակնկալիքով, 2012թ. դեկտեմբեր ամսին դիմել էինք ՀՀ տարածքային կառավարման նախարարին եւ ՀՀ Սյունիքի մարզպետին, սակայն նրանցից ստացել ենք անորոշ եւ ոչ հստակ պատասխաններ:

**«Թռչկան» քաղաքացիական նախաձեռնություն**

## Ձերբակալվել են նաեւ մարզի դատախազի տեղակալն ու գործով քննիչը

#### ՔԱԶԱՐԱՆԻ ԳՈՐԾԸ

Առանձնապես ծանր հանցագործության՝ Գրիգոր Պապյանի սպանության վերաբերյալ քննվող քրեական գործով ապացույց կեղծելու կասկածանքով 2013թ. հունվարի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերով քննության վարչությունում ձերբակալվել է Սյունիքի մարզի դատախազի նախկին տեղակալ Էդիկ Վահանի Հովսեփյանը: Իսկ ավելի վաղ հայտնի դարձավ, որ սպանության վերաբերյալ քննվող քրեական գործով ապացույց կեղծելու կասկածանքով 2013թ. հունվարի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերով քննության վարչությունում ձերբակալվել է ոստիկանության Սյունիքի մարզի քննչական բաժնի քննիչ Արման Ենգոյանը (ՀՀ ոստիկանության պետի հրամանով 07.09.2012 թ. ազատվել է պաշտոնից եւ գրանցվել ՀՀ ոստիկանության կադրերի ռեզերվում):

Մինչ այդ՝ նույն գործով է նույն հիմնավորումներով ձերբակալվել էին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի պետի օպերատիվ գծով նախկին տեղակալ Գագիկ Դանիելյանը, Կապանի տարածաշրջանի դատական բժիշկ Գագիկ Բաբայանը:

Ինչպես նշում են մարտաքաղաքային լրատվամիջոցները՝ գործի կեղծման հետ կապ ունի Սյունիքի մարզի նախկին դատախազ Արայիկ Թարվեդյանը, ով դեռեւս ձերբակալված չէ:

## Դատավորը ենթարկվել է պապասխանաբարության

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում ՀՀ արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետեւյալ տեսակներից մեկը՝ նախազգուշացում, նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, խիստ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով

աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ հանրապետության նախագահին դիմելը: Ինչպես տեղեկանում ենք Iravaban.net կայքից, 2012թ. ՀՀ արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել 22 դատավորի, որոնց թվում է նաեւ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լեռնիկ Աթաբեյանը, ով աշխատում է 1999 թվականից: Արդարադատության խորհուրդն

արձանագրել է, որ դատավոր Լ.Ա. Թաթարյանի կողմից թույլ տրված օրինականության սկզբունքի խախտման արդյունքում, Հանաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում դատարանը դատապարտյալ Տարոն Գալուստովի նկատմամբ կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշումը, որը կիրառելի չէր: Խորհուրդը Լ.Աթաբեյանի հայտարարել է խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

## ՀՀԿ-ԲՀԿ սերպ համագործակցությունը նոր դրսեւորումներ է ունենում

### ԲՀԿ-ի սյունիքյան տղերքը խոլապար են բռնել ՀՀԿ-ի ենթաշտաբերի մուտքերի առջեւ

#### ՍԿԻՔԵՆ՝ ԵՅ 1

համար Աղասի Հակոբջանյանն այս օրերին փորձում է վարձահատույց լինել:

Բայց դա՝ միայն առաջին հայացքից: Սյունիքի մարզպետարանի մեր աղբյուրները վկայում են, որ վերջերս Սիսիանի քաղաքապետարանում իրականացված ստուգումները լուրջ ծուղակ են հյուսել քաղաքապետի համար, որն իր նպատակին կծառայեցվի, եթե քաղաքապետը շարունակի իրեն ինքնուրույն գործիչ երեւակայել: Այնպես որ, Աղասի Հակոբջանյանը Սերժ Սարգսյանի տեղական թիմին աջակցելու իր շարժառիթն ունի եւ չի սիրում, երբ հարց են տալիս այդ կապակցությամբ. «Ես որպես քաղաքապետ սատարում եմ

թին:

Ստեղծված իրավիճակի մեջ, դատելով հայաստանյան ներկա շափանիչներով, տարօրինակ ոչինչ չկա. մարդիկ պաշտպանում են նրան, ով իշխանության ղեկին է, մարդիկ այնքան անկեղծ են, որ գաղափարը, ծրագրերն ավելորդություն են համարում: Այնպես որ, յուրաքանչյուր քաղաքացու եւ յուրաքանչյուր կուսակցության գործն է, թե ում է պաշտպանում: Մի հարց է միայն, որ այդ ամենի մեջ չի տեղավորվում իսկ ինչի՞ համար էին (ո՞ւմ էին պետք) ԲՀԿ-ի հայտնի խաղերը: Իսկ միգուցե Աղասի Հակոբջանյանն ու Կամո Աբրահամյանն ինքնուրույն են որոշել շրջանցել կուսակցության կենտրոնական մարմնի որոշումը, եթե, իհարկե, իրականում կա նման որոշում: Այդ հարցի պատասխանն էլ, անկեղծ ասենք, այլևս անհետաքրքիր է: Ընդհակառակը՝ մենք ՀՀԿ-ին ու ԲՀԿ-ին մաղթում ենք սեր եւ ոչ թե սիրախաղ:

**ՍՍՍՎԵԼ ԱՆՔՍԱՆՅԱՆ**

## Խորհր

ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի Սյունիքի մարզի ընտրական շտաբը կզվեցրի «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ տնօրեն Մաքսիմ Հակոբյանը: Ընտրական շտաբերը մարզի քաղաքներում կզվեցրեն Ագարակում՝ Մխիթար Ջաբարյանը (Ագարակի քաղաքապետ), Գորիսում՝ Նելսոն Ոսկանյանը (Գորիսի քաղաքապետ), Կապանում՝ Աշոտ Հայրապետյանը (Կապանի քաղաքապետ), Սեդրիում՝ Արշավիր Հովհաննիսյանը (Սեդրու քաղաքապետ), Սիսիանում՝ Ջիվան Մարգարյանը («Հայքըմուղկուղի» ՓԲԸ Հարավային մասնաճյուղի տնօրեն), Քաջարանում՝ Վարդան Գեւորգյանը (Քաջարանի քաղաքապետ): Նախընտրական շտաբեր են ձևավորվել նաեւ մարզի գյուղական համայնքների մեծ մասում:

Հայաստանի նախագահական ընտրությունը դիտարկելու նպատակով հանրապետություն է ժամանել ԵՄԿԿԻՄԻԳ առաքելությունը: Առաքելության ներկայացուցիչներ Յորգեն Բաբլունդը եւ Մերեթ Լաուբերգը, որ գտնվում են Սյունիքի մարզում, հունվարի 21-ին այցելել են «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն եւ հանդիպում ունեցել թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ: Դիտորդական առաքելության ներկայացուցիչներին հետաքրքրել են մարզային թերթի խմբագրության պատկերացումներն ու դիտարկումները նախընտրական ընթացքի վերաբերյալ: Սամվել Ալեքսանյանը հավաստել է, որ թերթը, որպես ազատ խոսքի հարթակ, պատրաստ է հավասար հիմունքներով ներկայացնելու թեկնածուների գովազդային նյութերն ու մարզային այցելությունները: Նախորդ ընտրությունները եւ հատկապես 2012թ. համապետական ու ՏԻՄ ընտրությունները վերստին ցույց են տվել, որ «Սյունյաց երկիրը» բոլորի թերթն է:

Օրերս «Կայուն զարգացում» ՀԿ-ի նախագահ Արմեն Փարսադանյանը նամակ է հղել ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանին, որում մասնավորապես ասվում է. «Խնդրում ենք տրամադրել /2007 թվականից մինչեւ 2012թ. ներառյալ/ հանրապետությունում օժնուղծական եւ սիրտանոթային հիվանդություններով ախտորոշված քաղաքացիների քանակային վիճակագրական տվյալներ՝ ըստ մարզերի»: «Սյունյաց երկիր» լրագրողի հետ զրույցում Ա.Փարսադանյանը նշեց. «Գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգամոսֆերային կենտրոնի կողմից 2007թ. Սյունիքի մարզում իրականացվել է հետազոտություն, որի արդյունքում պարզվել է, որ մարզի մի շարք համայնքներում՝ հողորդ, քրուս, բանջարաբուստանային մշակաբույսերում ծանր մետաղների եւ տոքսիկ նյութերի առկայությունը տասնապատիկ անգամ գերազանցում է նորման: ԶԼՍ-երում եւ քաղաքացիների շրջանում համախառնաբար են Սյունիքի մարզի բնակչության առողջական խնդիրների մասին ահազանգող քննարկումները, որոնց դեռեւս չեն անդրադարձել պատկան մարմինները: Հաշվի առնելով վերջին տարիներին Սյունիքի մարզում հանքարդյունաբերության ծավալների անմխաղեպ աճը, ցանկանում ենք համեմատել Սյունիքի եւ այլ մարզերի բնակչության շրջանում օժնուղծական եւ սիրտանոթային հիվանդությունների քանակային վիճակագրական տվյալները»:

# Մեկ տարում 408-ով պակասել է մարզի դպրոցականների թիվը

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ

Արդեն ավանդույթ է դարձել, որ ՀՀ պետությունը կողմ են քվեարկում միայն իշխող կոալիցիայի անդամները, իսկ խորհրդարանական ընդդիմադիրները՝ դեմ: ՀՀԿ-ական կառավարության ներկայացրած 2013 թվականի պետությունը նախատեսվում է տնտեսական աճի պահպանում, արմատական փոփոխություններ սոցիալական քաղաքականության մեջ, գործարար և ներդրումային միջավայրի եական բարելավում և նախընտեսական կայունության ապահովում: Բացի այդ կառավարությունը իր առջեւ խնդիր է դրել հասնել յոթ տոկոսանոց տնտեսական աճի: Մինչդեռ ընդդիմադիրները Ազգային ժողովում պետությունը քննարկումների ժամանակ պնդում էին, որ 2013 թվականի պետությունը տնտեսական նահանջի մասին վկայող փաստաթուղթ է: Հարգելով այն գաղափարը, որ յուրաքանչյուրն իր սեփական կարծիքն ունի, մեզ, նախենա՞նք, հետաքրքրում է, թե երկրի հիմնական ֆինանսական փաստաթուղթն ինչ է նախատեսում Սյունիքի համար, պետությունը հատկացրած միջոցներով ինչ գործեր են կատարվելու մարզում:

Նախ՝ փաստենք, որ 2013թ. պետությունը Սյունիքի մարզպետարանին մարզում ծրագրեր իրականացնելու համար հատկացվել է 4 միլիարդ 343 մլն դրամ՝ նախորդ տարվա 4 միլիարդ 229 միլիոն դրամի դիմաց: Այս տարվա համար հատկացված գումարի 2 միլիարդ 78 միլիոն դրամը կհատկացվի համայնքներին որպես լրավճար: «Պատմական հուշարձանների ամրակայում, նորոգում, վերականգնում» տողով Սյունիքի մարզին նախատեսված է հատկացնել 12 միլիոն 150 հազար դրամ՝ Վաղատին գյուղի Որտոնավանքի վերականգնման համար և 470 հազար դրամ՝ Տեղ գյուղի Սբ Գրիգոր եկեղեցու մասնակի նորոգման համար: Ծանապարհաշինական աշխատանքներ են կկատարվեն 2013-ին: Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական մայրուղու Գորիս քաղաքով անցնող 4.5կմ ճանապարհահատվածի նորոգման համար կհատկացվի 263 միլիոն դրամ և եւս 3 միլիոն դրամ նույն միջպետական ճանապարհի 311կմ հատվածում բերվածքները մաքրելու համար: Հանրապետական նշանակության ճանապարհներին են որոշ գործեր են նախատեսված: Մ-2 Տաթև-Աղվանի ճանապարհի երկու փուլոված

հատվածի վերականգնման համար նախատեսված է 5 միլիոն դրամ: Շինարարության թեման եզրափակենք այն փաստով, որ Կապանի N2 ավագ դպրոցի շինարարության համար կհատկացվի 100 միլիոն դրամ: Համարյա նույն է մնացել մշակույթի ոլորտին հատկացվող գումարը՝ այս տարի 55 մլն 219 հազար, նախորդ տարի՝ 52 մլն 938 հազար, ընդ որում «Մշակույթի տուն» տողով հատկացումը կազմել է 1 մլն 797 հազար դրամ, «Թանգարան» տողով՝ 10 մլն 449 հազար դրամ, «Թատրոն» տողով՝ 36 մլն 101 հազար դրամ, իսկ մշակութային միջոցառումներ իրականացնելու համար՝ 7 մլն 171 հազար դրամ: 9.2 մլն դրամով ավելացել է կրթության ոլորտին տրվող գումարի չափը, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ 6.2 մլն դրամով ավելացել է նախադպրոցական կրթությանը հատկացվող գումարի չափը: Եվս մի ուշագրավ փաստ հայտնաբերեցինք մարզպետարանից մեզ հատկացված տեղեկանքում, բայց ոչ ֆինանսների հետ կապված. 2012 թվականի հունվարին մարզի հանրակրթական 112 դպրոցում սովորում էր 14 հազար 492 աշակերտ, նոր ուսումնական տարում սովորողների թիվը կազմել է 14 հազար 84 աշակերտ, այսինքն՝

սովորողների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 408-ով: «Ընկերությունների կողմից հատկացվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով սուբվենցիա է հատկացվելու Կապան քաղաքին՝ 13 մլն 122 հազար, Քաջարան քաղաքին՝ 19 մլն 249 հազար, Ազարակ քաղաքին՝ 4 մլն 932 հազար, Սյունիք համայնքին՝ 1 միլիոն 440 հազար դրամ: Ինչպես անցյալ տարի, բացի պետությունից հատկացված գումարներով իրականացվող աշխատանքներից, մարզում ծրագրեր կիրականացվեն միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր ներդրողների կողմից հատկացվող ֆինանսական ներդրումների միջոցով: Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնում կազմվում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2013 թվականի միջոցառումների փաթեթը՝ տարածքային կառավարման նախարարություն և ներկայացնելու համար:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Սիլվա Համբարձումյանը խույս է տալիս, դադարանի որոշումները չեն կատարվում, իսկ իշխանությունները լռում են

## ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ

2008թ. գործարար Սիլվա Համբարձումյանը 13500հա հող է վարձակալել Սյունիքի մարզի 12 համայնքում: Այդ համայնքներն են՝ Սրաշեն, Լեռնաձոր, Ներքին Հանդ, Ծավ, Շիկահող, ճակատեն, Տաշտուն, Լիճք, Ավվանք, Նռնաձոր, Շվանիձոր, Լեռնաշեն: Հողերը վարձակալվել էին Սիլվա Համբարձումյանին պատկանող «Գ.Արշակյան» «Լուլիար», «Հանքարուղ» և «Թի էյ սի սի Արմենիա» ՍՊ ընկերությունների կողմից երկրաբանական հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով, 1հա-ի տարեկան վարձավճարը՝ 4-4.5 հազար դրամով: Սերվիտուտի պայմանագրի համաձայն Սիլվա Համբարձումյանի ընկերությունները նշված համայնքներին պետք է տարեկան վճարեին 47 մլն 746 հազար դրամ վարձավճար: Որոշ ժամանակ անց «Գ.Արշակյան» ՍՊԸ-ն այլեւ չի վճարել համայնքներին հասանելիք վարձ

ծավճարը: Եվ մի քանի համայնք՝ Ներքին Հանդ, Ծավ, Շիկահող, Ավվանք, Նռնաձոր, Շվանիձոր, Սրաշեն, ապառքների բռնագանձման հարցով, 2010-ի նոյեմբերին դիմել են դատարան: Ըստ դատարանի վճիռների՝ «Գ.Արշակյան» ՍՊԸ-ն նշված համայնքներին պետք է վճարի մոտ 28 մլն դրամ: Դատարանի վճիռների մի մասը «Գ.Արշակյան» ՍՊԸ-ն բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարանում: Վերջինիս 2011թ. հոկտեմբերի 19-ի և նոյեմբերի 11-ի վճիռներով վերաքննիչ բողոքները մերժվել են: «Գ.Արշակյան» ՍՊԸ-ն այդքանից հետո անգամ չի վճարել հողի վարձակալության վճարը (բացի Սրաշենից): Այս ամենից հետո համայնքները դիմել են դատական ակտերի հարկադիր կատարման (ՂԱՀԿ) ծառայություն՝ գումարի վճարումը հարկադրելու համար: Հարկադիրը սկսել է կատարողական վարույթ, բայց այդպես էլ գումարը չի գանձվել: Այս առիթով գրուցեցինք Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակա-

ռավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Սեյրան Ավետիսյանի հետ, ով մասնավորապես ասաց. «Համայնքի ղեկավարները դիմել են դատարան, հայցադիմումը բավարարվել է: Դատական գործընթացը հասել է մինչև վերաքննիչ, ապա վճռաբեկ դատարան, որից հետո համայնքապետարանները դիմել են ՂԱՀԿ: Հիշեցնեմ նաև, որ Սյունիքի մարզպետարանը ևս դատի էր տվել «Գ.Արշակյան» ՍՊԸ-ին, քանի որ մարզպետարանի ենթակայության (պահուստային ֆոնդից) հողեր ևս վարձակալվել էին նշված ընկերության կողմից»: Ըստ Ս.Ավետիսյանի՝ ՂԱՀԿ-ն պարզել է, որ «Գ.Արշակյան» ՍՊ անվճարումակ է, չունի ո՛չ գույք, ո՛չ դրամական միջոցներ: Իսկ քանի որ «Գ.Արշակյան»-ը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, ապա ՂԱՀԿ-ն չի կարող այդ գումարները գանձել Սիլվա Համբարձումյանից, քանի որ վերջինս այս դեպքում հանդիսանում է միայն

ներդրող: «Այժմ մենք ոչինչ անել չենք կարող, «Գ.Արշակյան» ՍՊԸ-ն անվճարումակ է և օրենքի ոչ լիարժեքության պատճառով է այս ամենը կատարվում: Կարծում եմ, հարցն արդեն մեր իրավասությունից դուրս է գտնվում, ավելի շատ քրեական ոլորտում է հնարավոր այն լուծել», – ասաց Սեյրան Ավետիսյանը: Այսպիսով՝ Սիլվա Համբարձումյանը շարունակում է օգտվել օրենքի անկատարությունից և ճարպկորեն խույս տալ պատասխանատվությունից: Իսկ գուցե անկատար օրենք է մշակվել այն նպատակով, որ հայրենական էլիտան իրեն զգա այնպես, ինչպես կետը՝ օվկիանոսում: Սի հարց էլ, որ այլևեցում անհայտ մնաց՝ այդ ո՞վ է Սիլվա Համբարձումյանը, որ կարողացել է Սյունիքի մարզում մոտ 14 հազար հեկտար հող վարձակալել՝ չունենալով (ինչպես հիմա է պարզվում) դրա համար գումար կամ ֆինանսական երաշխավոր:

ԱՐԱՎՆԻ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ

# Մեկ շաբաթում՝ երկու զինծառայողի մահ

## ԱՈՒՆՏ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

17.01.2013թ. միոկարդի սուր ինֆարկտ հարցականով, թոքային զարկերակացողունի թրոմբոէմբոլիա հարցականով, սուր սիրտ-թոքային անբավարարություն ախտորոշմամբ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է ՀՀ ՊՆ Ն զորամասի ժամկետային Սանուշարի Մկրտչյանը: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ քր. օր-ի 376 հոդ. 2-րդ մասով (անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ,

որն անզուգույթյամբ առաջացրել է ծանր հետևանքներ) հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն: Նույն օրը նախարար Ս.Օհանյանն աշխատանքից ազատել է ՀՀ զինված ուժերի ռազմաթշկական վարչության պետ Արտաշես Փարսադանյանին: Եվ, ինչպես տեղեկացնում է նախարարի մամուլի քարտուղարը, աշխատանքից ազատման պատճառը ժամկետային զինծառայող Արմենակ Մկրտչյանի դեպքի հետ է կապված: Գրեթե նույն ժամանակահատվածում՝ հունվարի 18-ին, ՀՀ պաշտպանության նախարարությունը հաղորդագրություն է տարածել, որ

կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է ՀՀ ՊՆ Ն զորամասի ժամկետային զինծառայող, Քաջարան գյուղի բնակիչ Արտուր Գագիկի Հակոբյանը: ՀՀ պաշտպանության նախարարությունը հաղորդում է, որ Գ.Հակոբյանն այնտեղ բուժվում էր հունվարի 13-ից: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն: Պաշտպանության նախարարությունը կիսում է ծանր կորստյան վիշտ և իր ցավակցությունը հայտնում մահացած զինծառայողների ընտանիքի անդամներին, հարազատներին և ծառայակիցներին: Որբերգական էր նաև ՀՀ ՊՆ

Ն զորամասի մարտական հենակետերից մեկում հունվարի 14-ին պատահած դեպքը. համաժառանգի կողմից արձակված կրակոցի հետևանքով գլխի շրջանում իրազենային վնասվածք է ստացել և կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ է տեղափոխվել պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Սիեր Արմենի Պետրոսյանը (զորակոչվել էր 2012թ. գարնանը Մեղրուց): Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ-ի 373 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն: ■

## Լուրեր

Հունվարի 21-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանը Սյունիքի մարզում էր: Ինչպես տեղեկացնում են Սյունիքի մարզպետարանից՝ նախարարի այցը ոչ պաշտոնական էր: Նա հանդիպել է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ, քննարկել Երևան-Մեղրի միջպետական ճանապարհի ձեռնարկի պահպանության վիճակը:

Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատականի նահանգապետ Ալիոեզա Բեյգի հրավերով 2013թ. հունվարի 14-ին երկօրյա այցով Թավրիզ էր այցելել Սյունիքի մարզի պատվիրակությունը՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանի զխավորությամբ: Պատվիրակության կազմում Ատրպատական էին մեկնել Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը, գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, ֆերմերներ ու գյուղական համայնքների ղեկավարներ: Այցի ընթացքում կնքվել են համաձայնագրեր, որոնց տեքստը ներկայացնում ենք թերթի սույն համարի 9-րդ էջում:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի սահմանած ամենամյա «Հայկյան» մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել բոլոր այն կազմակերպությունները, որոնք տարվա ընթացքում ակտիվ գործունեություն են ծավալել երիտասարդության շրջանում: Սահմանված 12 անվանակարգում ներկայացվել է նաև Սյունիքի մարզի «Դավիթբենյան ուխտեր» երիտասարդական կենտրոնը: Հրեյանական՝ 10-րդ մրցանակաբաշխությունը, որին ներկա էր հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, կայացավ երգի պետական թատրոնի դահլիճում: «Լավագույն երիտասարդական ՀԿ մարզում» անվանակարգում հաղթող ճանաչվեց «Դավիթբենյան ուխտեր» երիտասարդական կենտրոնը: Սուրեն Խաչատրյան, խորհրդի նախագահ՝ Ռուդոլֆ Սարգսյան)՝ արժանանալով սահմանված խորհրդանշական արձանիկի և առաջին կարգի պատվոգրի:

Հունվարի 28-ին Քաջարան քաղաքը նշեց հայոց բանակի կազմավորման 21-րդ տարեդարձը: Առավոտյան քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանը, ինչպես և երկրապահների քաջարանյան ստորաբաժանման ներկայացուցիչներ, զոհված ազատամարտիկների ծնողներ, դպրոցականներ ծաղիկներ դրեցին ազատամարտիկների գերեզմաններին՝ հարգանքի տուրք մատուցելով նրանց հիշատակին: Այնուհետև քաղաքապետը մեղալներ ևս հուշանվերներ հանձնեց նախկին ազատամարտիկներին և զոհված ազատամարտիկների ծնողներին: Տոնական միջոցառումներ էին կազմակերպել քաղաքի N1 միջնակարգ դպրոցի աշակերտները, N1 համայնքային մանկապարտեզի ավագ խմբի սաները: Դպրոցականները անուն առ անուն հիշեցին զոհված ազատամարտիկներին: Դպրոցի պատմության կաբինետը կոչվեց նրանց անունով: Միջոցառմանը ներկա էին նաև զոհված ազատամարտիկների ծնողներ, ովքեր շնորհակալություն հայտնեցին դպրոցի ուսուցիչներին, աշակերտներին՝ իրենց զավակների հիշատակը վառ պահելու համար:



# ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

## Սյունիք - Արեւելյան Արրպարական համագործակցության Նորահայր եւ վիճահարույց վկայագրերը

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Ի հետևանքում նախկինում Հայաստանի Միւնիք ժարզի եւ Իրանի Արեւելյան Արրպարական նահանգի ժարզպետների միջև տեղի ունեցած Համաձայնությունների եւ Համաձայն 15 Յունւար 2013 թ.ին Արեւելյան Արրպարական նահանգի գիւղատնտեսական կազմակերպութեան կենտրոնացում տեղի ունեցած ժողովի ընթացքին որտեղ ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Միւնիք ժարզի պատիրակութիւնը եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան Արեւելյան Արրպարական նահանգի գիւղատնտեսական բաժնի ներկայացուցիչները (Արեւելյան Արրպարական գիւղատնտեսական արտադրութեան կոտայերացիան), հետևեալ կէտերը ընդունւեցին՝

- 1- Իրանեան կողմը իր պատրաստակամութիւնը յայտնեց Հայաստանից գնելու կենդանի անասուններ:
- 2- Իրանեան կողմը իր պատրաստակամութիւնը յայտնեց ստեղծելու միասնական ընկերութիւն Հայաստանի եւ Արեւելյան Արրպարական միջոցով փոխադրելու եւ արտադրելու Արեւելյան Արրպարական գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը Հայաստան եւ կամ արտադրելու Ռուսաստան եւ Ա.Բ.Շ. երկրներ:
- 3- Գիւղատնտեսական արտադրողների կոտայերացիան առաջարկեց ստեղծել առեւտրական կենտրոն Հայաստանում:
- 4- Հայաստանի կողմը առաջարկեց պահանջած կէտերի կապակցութեամբ կատարել ժարզպետների Համաձայնութեամբ եւ Հաստատութեամբ:

Հայաստանի կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Սամուէլ Թանգեան  
Միւնիք ժարզի Գիւղատնտեսական  
Գատարանատու

Իրանեան կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Ալի Աղա Բարալի  
Արեւելյան Արրպարական  
Գիւղատնտեսական Արտադրութեան  
Կոտայերացիան Գատարանատու

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Ի հետևանքում նախկինում Հայաստանի Միւնիք ժարզի եւ Իրանի Արեւելյան Արրպարական նահանգի ժարզպետների միջև տեղի ունեցած Համաձայնությունների եւ Համաձայն 15 Յունւար 2013 թ.ին Հայաստանի Հանրապետութեան Միւնիք ժարզի պատիրակութեան ներկայութեամբ Արեւելյան Արրպարական նահանգի գիւղատնտեսական կազմակերպութեան կենտրոնացում տեղի ունեցած ժողովին, գիւղատնտեսական բաժնի ներկայացուցիչները իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին Միւնիք ժարզ փոխադրելու անասուններ եւ արտադրելու հետևեալ պայմաններով՝

- 1- Իրանեան կողմը իր պատրաստակամութիւնը է յայտնեց անասուններ փոխադրել Միւնիք ժարզ եւ արտադրելու եւ իր պետք եղած արտադրողը ամենապակաս 50.000 Հեկտար է:
- 2- Պետք եղած ժամանակը անասունները արտադրելու Համար ամենապակաս 10 տարի է եւ ամէն պետք եղած տարածքը ընդհանուր ժարզիան Համար որոնք կատարելու եւ փոխադրման ընթացքը 2000 Հեկտար է:
- 3- Հայաստանի կողմի առաջարկութեան Համար արտադրողները աշխարհում Համար, Իրանեան կողմի Համաձայնութեամբ աշխարհում ժամանակը նշանակեց յատկապէս զարեանը:
- 4- Հայաստանի հետազոտութիւնների կենտրոնը գերատեսու է ցինելու բոլոր անասնաբուժական ինքնիւրներին:
- 5- Արտադրողների վարձի վերաբերեալ Հայաստանի կողմը առաջարկեց 25 դրոյս ամէն մէկ Հեկտարի գինաց մէկ տարուայ Համար որը ընդունեց Իրանեան կողմից եւ այս ծրագրի իրականացման պարագային սկզբնական տարիներում վերադառնալ է առաջարկած գումարից աւելի քիչ եւ միւս տարիների ընթացքին վարձը աւելանալու է աստիճանաբար:
- 6- Հայաստանի կողմը վարձելու ժամանակը յայտնեց 5 տարի եւ ընդունեց որ միւս տարիներում պայմանագրերը նորայնի մինչեւ 10 տարի:
- 7- Հայաստանի կողմը ընդունեց Հայաստանի կաթնամթերքը Համաձայնութեան պարագային արտադրելու Իրան (Իրանեան ընկերութեան միջոցով) Համաձայնեց նաեւ հիմնել մի ընկերութիւն Հայաստանի եւ Իրանի միջոցով:

Հայաստանի կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Սամուէլ Թանգեան  
Միւնիք ժարզի Գիւղատնտեսական  
Գատարանատու

Իրանեան կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Դարուզ Շեքրի  
Արեւելյան Արրպարական  
Գիւղատնտեսական  
Կոտայերացիան Կատարանատու

**Յանուս Աստուծոյ**  
**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Ի հետևանքում նախկինում Հայաստանի Միւնիք ժարզի եւ Իրանի Արեւելյան Արրպարական նահանգի ժարզպետների միջև տեղի ունեցած Համաձայնությունների եւ Համաձայն 14 Յունւար 2013 թ.ին Արեւելյան Արրպարական նահանգի գիւղատնտեսական կազմակերպութեան կենտրոնացում տեղի ունեցած ժողովին որտեղ ներկայ էին Միւնիքի եւ Արեւելյան Արրպարական ժարզի յարգիչ ժարզպետները, կախաւցիչին հետևեալ որոշումները (այն Համաձայնութիւնը սկզբնական է եւ վերջնական Համաձայնութիւնը կախաւցելու է երկու կողմերի ժարզպետների միջոցով)՝

- 1- Որոշեց Հայաստանի կողմը Իրանեան կողմից՝ զետեղելու Հա Քուէլէ Սանաթի Ագարաշան ընկերութիւնից առաքւած գնել 10 Հաա քումբայն որի քաթարողը արդէն ներկայացուց է:
- 2- Իրանեան կողմը՝ Քրաքթորապիչ Իրան ընկերութիւնը առաջին փուլին իր պատրաստակամութիւնը յայտնեց Հայաստանի կողմի պետք եղած Քրաքթորները եւ Քրաքթորի կոտայերը ապահովելու իսկ Քրաքթորապի ընկերութեան Քրաքթորի Եռնթամի ընթացքի նախաձեռնումի կապիտալները բաժան կապակցութեամբ իր սեփական յայտնելու է ուսումնասիրութիւններից թառոյ:
- 3- Որոշեց Քարթիչի Փեթրոլի ընկերութիւնը իր արտադրութեան ցանկը Հայաստանի կողմին արամադրութեան տակ գնել որդեկացի Հայաստանի կողմի ունեցած պահանջը յայտնելու եւ ապահովել Փեթրոլի ընկերութիւնը նաեւ իր պատրաստակամութիւնը յայտնեց Հայաստանի կողմի պահանջները ապահովելու Համար:
- 4- Որոշեց Հայաստանի կողմը յայտնել իր պահանջած ընկիւն եւ թոյլների տեսակն ու քանակը որդեկացի Փեթրոլի ընկերութիւնը յայտնել արդէն:
- 5- Իրանի պրիմից գրեմակ արտի Հայաստանի կողմին որդեկացի ուսումնասիրութիւններից թառոյ, Իրանի կողմի ներկայացուցիչը ժամանակին ապահովելու է յայտնել:

Հայաստանի կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Սամուէլ Թանգեան  
Միւնիք ժարզի Գիւղատնտեսական  
Գատարանատու

Իրանեան կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Դարուզ Շարարանի  
Ռահեմեդին Քեթրապիչ  
Ընկերութեան  
Ընդհանուր Տնօրէն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Համաձայն 15 Յունւար 2013 թ.ին Հայաստանի Հանրապետութեան պատիրակութեան պատիրակութեան ներկայութեամբ Արեւելյան Արրպարական նահանգի գիւղատնտեսական կազմակերպութեան կենտրոնացում տեղի ունեցած ժողովին, Արեւելյան Արրպարական թեմաթիւն ընկերութեան ներկայացուցիչները իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին Հայաստանի Միւնիք նահանգում գիւղատնտեսական եւ անասնաբուժական գործունէութեան Համար եւ Համաձայնութիւն եղաւ հետևեալ կէտերի վերաբերեալ՝

- 1- Հայաստանի կողմը իր պատրաստակամութիւնը յայտնեց պետք եղած տարածքը գիւղատնտեսական, աշխարհում եւ անասնաբուժական նպատակով վարձով տրամադրելու Իրանեան կողմին:
- 2- Իրանեան կողմը իր պատրաստակամութիւնը յայտնեց ամենապակաս 200 Հեկտար տարածք տրամադրելու վերաբերեալ աշխատանքների Համար որը հարաւոր եղած պարագային միտակց:
- 3- Անասունների սնուցման կապակցութեամբ տարուայ ընթացքին, երկու կողմերը Համաձայնեցին եւ որոշեց վերջնական իտակցութեան ժամանակ պայմանները արւելու:
- 4- Որոշեց Իրանեան կողմը տարածքները մօտիկ ուսումնասիրելու եւ թառոյ պլանները գործադրել:

Հայաստանի կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Սամուէլ Թանգեան  
Միւնիք ժարզի Գիւղատնտեսական  
Գատարանատու

Իրանեան կողմի ներկայացուցիչ՝  
Գարոն Դարուզ Շարարանի  
Ռահեմեդին Քեթրապիչ  
Ընկերութեան  
Ընդհանուր Տնօրէն

ՄՇԱԿՈՒՅԹ

# Մասնաճյուղի, Նրա խնդիրների և Գարեգին Նժդեհի կերպարավորման մասին

Հարցազրույց դերասան Շանթ Հովհաննիսյանի հետ

**Երեւանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գործիսի մասնաճյուղի տնօրեն, Գործիսի պետական դրամատիկական թատրոնի դերասան Շանթ Հովհաննիսյանը վերջերս նկարահանվել է «Գարեգին Նժդեհ» գեղարվեստական ֆիլմում մարմնավորելով երիտասարդ Նժդեհին: Այս և այլ հարցերի շուրջ է մեր գրույցը դերասանի հետ:**

**– Շանթ, կարո՞ղ եք փոքրիկ կենսագրականով ներկայացնել ինքնե՞րդ Ձեզ:**

– Ծնվել եմ 1974 թվականին Գորիսի Շինուհայր գյուղում, ծանայողի ընտանիքում: Մանկության, պատանեկության տարիներին խաղացել եմ գյուղի թատերական ինքնագործ խմբում, մասնակցել շրջանում կազմակերպված գեղարվեստաթատերական տարբեր միջոցառումների:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1991-95թթ. սովորել եմ Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական բաժնում:

Սկզբնական շրջանում, որպես դերասան, աշխատել եմ Արտաշատի թատրոնում: Այնուհետ վերադարձել եմ Գորիս և աշխատել պետական դրամատիկական թատրոնում: Կարճ ժամանակ անց գորակազմել եմ հայտնի Բաղդասարյանի թատրոնում: 1997թ. կրկին վերադարձել եմ թատրոն՝ դերասանի իմ աշխատանքին, եւ մինչեւ այսօր այստեղ եմ: Այդ ընթացքում ոչ միայն բազմաթիվ դերեր եմ ունեցել տարբեր ներկայացումներում, նաեւ խաղացել եմ մի շարք գեղարվեստական ֆիլմերում՝ «Մի վախեցիր», «Երեք ընկեր», «Խաչագողի հիշատակարանը», «Չնչիկ» և «Գեներալի աղջիկը» հեռուստատեսությամբ: Շուտով կկայանա նաեւ «Չնչիկ» ֆիլմի երկար սպասված պրեմիերան:

2004թ. բացվեց Երեւանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը, որի տնօրենն եմ: Զուգահեռ դասավանդում եմ դերասանի վարպետություն առարկայում:

**– Ո՞րն էր մասնաճյուղի բացման նպատակը, եւ այս տարիների ընթացքում, որպես այդպիսին, արդյո՞ք այն արդարացրել է իրեն: Կարողացել էք պատրաստել շնորհալի դերասաններ: Պատմե՞ք մասնաճյուղի առաքելության, կատարած աշխատանքների մասին:**

– Գորիսում թատրոնի և կինոյի ինստիտուտի մասնաճյուղի բացումը վաղուց արդեն հրատապ խնդիր էր դարձել: Գորիսի թատրոնը դեռ անցյալ դարի երեսնական թվականներից քաղաքի մշակութային կյանքում հսկայական դեր է ունեցել: Այստեղ խաղացել են թատերական աշխարհի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են Վահրամ Փափազյանը, Ավետ Ավետյանը, Հրաչյա Ներսիսյանը և այլք: Մեծ ավանդ է պատմություն ունի Գորիսի թատրոնը: Տասնյակ տարիներ շարունակ թատրոնի դերասանական կազմը, որը բաղկացած էր հանրապետությունում ճանաչված պրոֆեսիոնալ դերասաններից, բեմադրում էր



հայրենական և համաշխարհային գործերի դասական գործեր, պիեսներ:

Քաղաքի պետական դրամատիկական թատրոնը, որն արդեն բավականին ճանաչարի է անցել, փոխարինող կադրերի լուրջ խնդիր ուներ: Մայրաքաղաքային դերասանները չէին համաձայնում Երեւանից գալ ծայրամասային քաղաք՝ դերասանական աշխատանքի: Հավաքեալ եկողներն էլ կարճ ժամանակ անց նորից մեկնում էին: Տեղում կադրեր պատրաստելու հարցը հասունացել էր, եւ սհա հենց այդ նպատակով էլ բացվեց Երեւանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի մասնաճյուղը, որն էլ այս տարիների ընթացքում կայացավ: Գործունեության ընթացքում ունեցել ենք շուրջ քսան շրջանավարտ, որոնցից չորս հոգի՝ Երիկ Գրիգորյանը, Ալսեյ Բակունցը, Միքայել Մաշուրյանը, Կարինե Մարությանը, այժմ աշխատում են Գորիսի թատրոնում: Արտաշատի թատրոնում է աշխատում մեր շրջանավարտ Հասմիկ Ղարիբյանը: Ունենք, իրոք, շնորհալի աղջիկ շրջանավարտներ, որոնք ամուսնանալուց հետո չեն աշխատում իրենց մասնագիտությամբ: Դա, իհարկե, մեզանում սխալ ձեռնարկված մտածելակերպի արդյունք է: Կարծում եմ, դա ժամանակի խնդիր է և կլուծվի:

Արդեն երկրորդ տարին է, ինչ մասնաճյուղը դերասանական կուրս է բացել Շուշիում, անցած տարի՝ նաեւ Կապանում: Այս տարի դարձյալ կուրս կհավաքվի Գորիսում:

Կան տաղանդավոր երեխաներ, ովքեր հնարավորություն չունեն մեկնել մայրաքաղաք, իսկ մեկնողներից շատերն էլ չեն ցանկանում վերադառնալ: Այս նախաձեռնությունը հնարավորություն է ստեղծել, միաժամանակ, մնալ հայրենի քաղաքում և ստանալ բարձրագույն դերասանական կրթություն, այսպիսով, լուծելով նաեւ թատրոններում առաջացած սերնդափոխության խնդիրը: Ուսանողները սովորելու տարիների ընթացքում կարող են իրենց ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառել տեղի թատրոններում: Ապագա դերասանի կայացման համար սա շատ կարելու գործոն է:

Երեւանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի ղեկավար Արմեն Մազմանյանի անմիջական

նախաձեռնությամբ, տեղի դասախոսական կազմից բացի, մեր ուսանողներին դասավանդում են նաեւ Երեւանից գործուղված այնպիսի անվանի թատերական գործիչներ, բարձրակարգ մասնագետներ, պրոֆեսորներ. ինչպիսիք են ինքը՝ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արմեն Մազմանյանը, պրոֆեսոր Հրաչյա Գասպարյանը, բեմական խոսքի առաջնակարգ վարպետ Աննա Հեքեքյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Վասիլ Գրիգորյանը (թատրոնի պատմություն), պրոֆեսոր Ռոմանոս Սահակյանը (արվեստաբանություն), Յուրա Կոստանյանը (շար-

ժում և մնջախաղ), ամերիկացի դերասանուհի Նորա Արմանին: Վերջինիս՝ Հայաստան կատարած յուրաքանչյուր այցելության ժամանակ ձգտում եմ անպայման հրավիրել մեզ մոտ՝ դերասանի վարպետության դասեր անցկացնելու համար: Տարբեր համդիպումներ ենք կազմակերպում անվանի և ճանաչված արվեստագետների հետ:

Մասնաճյուղն ունի երեսուն ուսանող, որոնցից տասը հոգի սովորում է Գորիսում: Շուշիում բացված դերասանական կուրսում սովորում է տասներկու ուսանող էլ, շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցության, բոլորն էլ սովորում են անվճար հիմունքներով: Դասախոսության մեկնած մասնագետներին մշակույթի նախարարությունը տրամադրում է հյուրանոցային հարմարավետ համարներ: Այսինքն՝ որակյալ կրթություն և ապահովելու համար ստեղծվել են պայմաններ և ուսանողների, և ժամանած մասնագետների համար: Կապանի կուրսը բաղկացած է ութ հոգուց, որոնց համար պայմաններ է ապահովել Կապանի թատրոնը՝ Կանո Արզումանյանի գլխավորությամբ: Ավարտական կուրսում ունենք վեց ուսանող, որոնք պատրաստվում են դիպլոմային աշխատանքի: Անցած տարի ավարտական կուրսի դիպլոմային ներկայացումն առաջին անգամ ներկայացվեց Երեւանում՝ համազգային թատրոնում, եւ արժանացավ համաձայնագրով բարձր գնահատանքին՝ թե՛ բեմադրությունը, թե՛ դերասանական խաղը: Անեմ, որ բեմադրության հեղինակը երիտասարդ տաղանդավոր ռեժիսոր Գոռ Մարգարյանն էր, ով այսօր աշխատում է Գորիսի թատրոնում՝ գլխավոր ռեժիսոր:

Ընդհանրապես, ձգտում եմ, որ մասնաճյուղի ուսանողները ոչ միայն չկտրվեն մայրաքաղաքի թատերական կյանքից (միջոցառումներ, փառատոներ), այլեւ՝ լավագույնները ընդգրկվեն նկարահանվող գեղարվեստական ֆիլմերում: Դա շատ մեծ փորձառություն է ինքնավստահություն է տալիս ապագա դերասանին: Վիզեն Ստեփանյանի «Տերն ու ծառան» բեմադրությամբ մասնակցել ենք «Թատերական Լոռի» փառատոնին, եւ մեր շրջանավարտներ Երիկ Գրիգորյանն արժանացել է «Երիտասարդ լավագույն դերասան», Թեմինե Աբրահամյանը՝ Գալյա Նովենցի անվան, իսկ դերասանական խումբը՝ «Լավագույն անսամբլ» մրցանակների: Դերասանական կազմը, հիմնականում, մեր մասնաճյուղի ներկայիս ու նախկին ուսանողներից էր: Մեր ուսանողները մասնակցում են նաեւ մարզային մշակութային միջոցառումներին:

Մասնաճյուղը ոչ միայն անհրաժեշտ էր, այլեւ, պետք է ունենա շարունակական գործունեություն: Ճիշտ է, չունենք ֆինանսական մեծ հնարավորություններ, բայց, ցանկալի կլիներ, որ մասնաճյուղում բացվեին եւս մի քանի բաժիններ՝ ռեժիսուրա, օպերատորություն, բեմականիչություն, արվեստի կառավարում: Այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ մեծ շինություն, որտեղ կլինեն մասնագիտական լսարաններ՝ հնարավորին հագեցած տեխնիկայով: Այս ամենը լուրջ ֆինանսական ներդրում է պահանջում: Մեր շրջանավարտները քաղաքի, մարզի եւ, ինչու ոչ, տարածաշրջանի մշակութային կյանքի հետագա զարգացման ու աշխուժացման պատվավոր գործունե կունենան իրենց կարելու դերն ու գործունեությունը:

Մասնաճյուղի ստեղծման պահից մինչ օրս զգացել ենք Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի անմիջական աջակցությունը՝ հաստատության տարածքի, անապահով ուսանողների ուսման վճարների հատկացման հարցում:

Ներկայումս մասնաճյուղը գործում է Գորիսի քաղաքապետարանի կողմից անհատույց տրամադրված տարածքում: Այն ուշադրությունն ու վերաբերմունքը, որ զգում ենք մարզպետի իշխանությունների կողմից՝ մեր կատարած աշխատանքի ու նրա կարեւորության նկատմամբ, ոչ միայն ուրախացնող, նաեւ՝ պարտավորեցնող հանգամանք է:

**– Շանթ, այժմ խոսենք վերջերս նկարահանված «Գարեգին Նժդեհ» գեղարվեստական ֆիլմում Ձեր կերտած երիտասարդ Նժդեհի կերպարի, ժողովրդի մեջ արդեն իսկ տիրող քննադատական, ժխտողական վերաբերմունքի և այն մասին, թե արդյո՞ք ֆիլմի ստեղծագործական կազմին հաջողվեց հասնել մեծ զորավար, քաղաքական գործիչ, ազգային բարոյախոս ու մտածող Գարեգին Նժդեհի բարդ կերպարը, նրա գործունեությունը, սովյալ ժամանակաշրջանը բացահայտելու գերիմդրի ու նպատակին:**

– Սկսեմ իմ դերակատարման նախապատմությունից: Դեռես չորս տարի առաջ ֆիլմի պրոդյուսեր և գլխավոր ռեժիսոր Հրաչ Քեչիշյանից իմացա, որ Գարեգին Նժդեհի մասին ֆիլմ է ուզում նկարահանել և Նժդեհի դերում ինձ է տեսնում: Թե ինչպես է ստացվել իմ դերակատարումը, կերես մեծ էկրանին: Ընդհանուր առմամբ, ես գոհ եմ եւ կարծում եմ, հաջողված ֆիլմ է լինելու: Բայց վերջնական գնահատականը, իհարկե, կտա ժողովուրդը, երբ ֆիլմը կբարձրանա մեծ էկրան, կըջի մարզերով, դուրս կգա նաեւ սփյուռքահայության մեծ շրջանակներ: Նախապես ժխտողական կեցվածքով քննադատել ֆիլմը, կարծում եմ, իմաստ չունի: Տեղյակ եմ

քննադատական կարծիքներին, որոնք վաղաժամկետ են և քիչ տուկոս են կազմում:

Իրոք, իրականացվել է բարդ, հսկայական կինոաշխատանք: Բայց թե՛ ինչքանով է ֆիլմի դերասաններին և գլխավոր ռեժիսորին հաջողվել այդ աշխատանքը, կերես, կրկնում եմ, ֆիլմը դիտելուց հետո: Այն ժամանակ արդեն կարող եմ, ինչքան արտները ուզում է, կարծիքներ հայտնել:

Ֆիլմում ունենք նաեւ իրավիճակ դերասաններ. Նժդեհի կնոջ՝ Էվինի դերում՝ Ռուսաստանի վաստակավոր դերասանուհի Չուլպան Խամատովան է: Հրավիրված է նաեւ հանրաճանաչ դերասան Սիխայիլ Եֆրեմովը:

Դեռես ես չեմ դիտել ֆիլմը, քանի որ ավարտված է, կատարվում են վերջնական աշխատանքները: Կարծում եմ, ֆիլմը թե իր գաղափարական կարեւորության ու ժամանակաշրջանի զգացողության, ներկայացման, եւ թե՛ երաժշտության, մոտաժի և այլ առումներով ու գեղարվեստական որակով, մի քայլ առաջ կլինի՝ մինչ այդ մեր նկարահանած ֆիլմերից:

Ազգային մեծ գործիչ, հերոս, նվիրյալ Գարեգին Նժդեհի մասին գեղարվեստական ֆիլմ նկարահանելու գաղափարն արդեն շատ բարի, անհրաժեշտ գործ է: Մնում է լավատես և համբերատար լինե՞նք: Ֆիլմի պրեմիերան կկայանա հունվարի 27-ին և 28-ին Մոսկվա կինոթատրոնում:

**– Շանթ, ֆիլմում Դուք կերպարավորել եք երիտասարդ Նժդեհին: Չէ՞ որ անբան էլ հեշտ չէ կերպարավորել մի մարդու, որը հայոց պատմության պլեյադի օվկիանոսում էր նվիրյալ և հերոս էր, եւ գաղափարական ու կազմակերպչական առաջնորդ: Բալկանյան պատերազմից մինչեւ Կողբ ու Ալաջա, մինչեւ Ալեքսանդրյակ ու Լեռնահայաստան, նա իր հերոսական մարտերով հաստատեց հայ ժողովրդի հարատւելու իրավունքը, նրա հավաքական կամքը: Մի՞թե դժվար չէր հոգեբանորեն մարմնավորել Գարեգին Նժդեհ - մարդուն, ում կյանքը եղել է շիկացած նվիրաբերում հայրենիքին և անհավիտի մեծ հուսախաբություն՝ նույն հայրենիքից...**

– Բնականաբար, Նժդեհի ողջ կյանքը հնարավոր չէ մեկ ֆիլմի մեջ ամփոփել, թեպետ ֆիլմի սցենարիստ Քրիստ Մանարյանը հնարավորինս ջանացել է անդրադառնալ կարեւոր իրադարձություններին: Ֆիլմը սկսվում է Նժդեհի՝ բանտում եղած տարիներից, եւ հետիշտորությամբ ծավալվում են դեպքերը: Ոչ միայն հոգեբանորեն, բոլոր առումներով դժվար է Նժդեհին մարմնավորել: Ֆիլմի ստեղծագործական խմբի համար էլ դա պատասխանատու աշխատանք էր: Դա մի սովորական ֆիլմ չէ՝ սովորական մարդու մասին: Ուսումնասիրելով Նժդեհի կերպարը, դժվար ժամանակաշրջանը՝ հասկացա, թե ինչպիսի ծանր և պատասխանատու գործ եմ առնում ուսերիս՝ սկսած միմիկայից, շարժումից և Նժդեհ մարմնավորող ամեն ակնթարթից:

Հուսանք, որ ֆիլմը մեծ էկրաններից ցուցադրվելուց հետո, մեզ՝ ֆիլմի ստեղծման մասնակիցներին, հպարտության զգացողություններ են սպասվում:

**– Հուսանք, Շանթ, մանավանդ որ, Աստված մի արասցե, ֆիլմը, մեղմ առած, չընդունվելու դեպքում՝ ջուրը կլվնեն, միաժամանակ, եւ հայրության սպասելիքները՝ ֆիլմից, եւ այն հսկայական միջոցները, որ ծախսվել են ֆիլմի նկարահանման վրա:**

Սուսաննա Բաբաջանյան  
21 հունվարի 2013թ.

# Սամվել Ալեքսանյանի համար լրագրությունը հավատարմաբ է ու կենսակերպ

Ինչ-որ բնագավառի որեւէ անձի գործունեության վերաբերյալ դրվատանքի խոսք ասելու ցանկությունը մարդու մեջ այն ժամանակ է առաջանում, երբ տվյալ բնագավառի ներկայացուցիչն իր օժտվածությամբ վերջինիս զարմացնելով՝ միաժամանակ նրա համակրանքին է կարողանում արժանանալ:



Սամվել Ալեքսանյանի մասին խոսք ասելու, նրա լրատվական գործունեությունն ավելի մեծ լսարանի առջեւ գոնե մի քանի գրավոր նախադասությամբ արժեւորելու ներքին ցանկություն վաղուց ունեի: Իսկ երբ վերջերս Վահանյանի 1100-ամյակին նվիրված «Սյունյաց երկիր» թերթի 30/271/ համարում կարդացի Սամվել Ալեքսանյանի առաջնորդող խմբագրականը, այնպիսի ոգեւորություն ու զարմանք էր պարուրել ինձ, որ իմ ցանկության հարկանագույնը հետաձգելը, երեւի թե՛ արդեն պարտքի զգացողության վերածված՝ կծանրանար հոգուս վրա: Եվ հիմա ուզում եմ իմ խոսքը սկսել ոչ թե ինձ անընդհատ զարմացնող նրա լրատվական գործունեությունից, այլ հիացնելու չափ զարմացրած հենց վերոնշյալ խմբագրական հոդվածից:

Ովքեր ծանոթ չեն «Սյունյաց երկիր» թերթում տպագրված Սամվել Ալեքսանյանի հիշյալ առաջնորդող խմբագրականին՝ նրանց համար պիտի ասեմ, որ այն Վահանյանից հոբելյարի դարավոր գոյությունը փառաբանող մեծարման «կենսագրություն» չէ, որ նման դեպքերում, սովորաբար, հավուր պատշաճի գրվում է: Խմբագրականն իրականում, մեր պատմության հակասությունները վեցում մի դարաշրջանի հոգեւոր,

եւ պարզ ու անպաճույճ, պատմական պատուհի վերածած իր խոսքի մեջ, հայտնի փաստերն ու եղած կարծիքներն ի մի բերելով՝ համադրելով ու հակադրելով՝ կարողացել խնդրո հարցում ունեցած իր տեսակետները պատմագիտության քննախույզ ոգուն հարազատ շարադրանքով հստակորեն հիմնավորել:

Սամվելը միայն կավելացնեմ, որ Վահանյանի 1100-ամյակի կապակցությամբ Սամվել Ալեքսանյանի գրած խմբագրականը պատմագիտական թեզ կոչվելու բոլոր ատրիբուտները միանշանակ ունի: Սակայն այդ հավակնությամբ այն գիտական աշխարհին ներկայացնելու դեպքում՝ ըստ իս, լրատվական հոդվածի ոճական տարրեր պարունակող մի քանի փոքրիկ հատվածներ պիտի վերաշարադրվեն:

Անկեղծորեն պիտի խոստովանեմ, որ երկար ժամանակ Սամվել Ալեքսանյանի լրագրողական խոսքին ծանոթ չլինելով՝ նրա կարողություններին լուրջ չեմ վերաբերվել: Եվ դրա հիմնական պատճառը թերեւս այն էր, որ խորհրդային Միության տարիներին, երբ նույնաման հերթապահ նախադասություններով ողողված էին բոլոր լրատվամիջոցները, ես թերթ կարդալուց խորշում էի: Թերթի հանդեպ տածած իմ հակակրանքն այնքան խորն էր նստվածք տվել, որ անգամ անկախությունը ձեռք բերած Հայաստանի Հանրապետության սկզբնական տարիներին, երբ նորաստեղծ թերթերը, հնդերի հետ մրցության մեջ մտած, հետաքրքիր հոդվածներով հեղեղում էին մեր իրականությունը, իմ նախկին տրամադրվածությունն ամենեւին չէր ուզում զիջել իր դիրքերը:

Իսկ երբ վերջապես սկսեցի թերթ կարդալ «սովորել», տեսա, որ փյուզումների մեջ հայտնված անկախացած Հայաստանի տեղեկատվական դաշտին պատուհասել է մի նոր շատ ցավալի իրավիճակ, որում «հարգի» էին խոսքի ազատության ինքնանպատակ պատկերացումներն ու ստահակության հասնող լրատվական դրսեւորումները:

Պղտորություններով հագեցած լրատվական այսպիսի իրականության մեջ ես սկսեցի հանդիպել Սամվել Ալեքսանյանի հեղինակած հոդվածներին: Սկզբում նրա հոդվածներում ձախ երեւալու շինծու պահվածք էի փորձում տեսնել, որը ժողովրդի մեջ հեշտ հեղինակություն ձեռք բերելուն միտված լրագրողական աշխարհի ամենատարածված հնարքներից է: Սակայն տարիների քաղաքացիական իր համառ կեցվածքով նա ոչ միայն տողերիս հեղինակին, այլ ինձ հետ նաեւ շատ թերահավատների «պարտադրեց հասկանալ», որ ինքը լրագրողի անշնորհակալ մասնագիտությանն ամբողջ էությամբ նվիրված մի անխոցելի երեսույթ է, եւ որ իր համար հասարակական կյանքն անխորտոշող, անաչառ լրատվությունը հավատարմ է ու կենսակերպ:

Սամվել Ալեքսանյանի հեղինակած հոդվածները վկայում են, որ նա հասարակության այս կամ այն խավի դիմություն կամ ընդդիմություն լիազարդ լրագրողական պատվիրակը չէ, այլ հասարակական կյանքում համամարդկային արժեհամակարգ արմատավորել կամեցող լրատվական աշխարհի այն երախտավորներից է, ով իրադարձություններն է իրողություններն լուսաբանելիս՝

միշտ ձգտում է գտնվել լրագրողի առաքելության անկողնակալ հարթության վրա ու փորձում չդավաճանել իրականությանն ու չաղավաղել ճշմարտությունը:

Կարդալով ժողովրդավար ու իրավական պետությանն անհարիր երեւոյթները մերկացնող, շատերին ինքնաբավ թմբկից արթնացնող, ոմանց ապագային, ապիկար պահվածքը խարազանող, այս բարդ ժամանակներում ժողովրդի գոյատևման կամքին կորով ներարկող Սամվել Ալեքսանյանի տարաբնույթ հոդվածները՝ հիրավի ապշում ես, թե բնությունը որքան կամային լիցքեր ու անսպառ եռանդ է պարգևել այս մարդուն...

Անդրադառնալով Սամվել Ալեքսանյանի խմբագրական ունակություններին՝ նախ պիտի ասեմ, որ յուրաքանչյուր թերթ առաջին հերթին ի ցույց է դնում իր խմբագրի աշխարհընկալման ամբողջական պատկերը: Այս ճշմարտության ենթատեքստում պիտի փաստեմ, որ մարդային կարգավիճակում գործող նրա խմբագրած «Սյունյաց երկիր» թերթին հավասարապես խորթ են թե՛ զավանթատար պարկեշտությունը, թե՛ ամբարտաւան գավառանտությունը: Եվ ի լուր ամենքի՛ պիտի հայտարարեմ, որ ազգային հոգեկերտվածքի վրա խարսխված համամարդկային ընկալումներն են խոսքի ազատության «Սյունյաց երկիր» թերթին ուղեկցող գաղափարական չափորոշիչները:

Ավարտելով խոսքս՝ վերջում ուզում եմ ընթերցողին հայտնել նաեւ «Սյունյաց երկիր» թերթի վերաբերյալ ունեցած հետեւյալ իմ կարծիքը. առանց դույզն-ինչ տարակուսելու «Սյունյաց երկիրը» ես համարում եմ Հայաստանի Հանրապետության ամենալուրջ եւ առաջնակարգ լրատվամիջոցներից մեկը:

Ընդամենը՝ այսքանը, եւ իմ բարեմարտները՝ «Սյունյաց երկիր» թերթի բոլոր աշխատակիցներին...  
**ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

## Մանկավարժության նվիրյալներից մեկը



**ԳՆԱՅԱՏԱՆԸ**  
Յուրաքանչյուր մարդ ի վերուստ սահմանված որոշակի առաքելությունով է աշխարհ գալիս, եւ օրհնյալ է նա, ով ողջ գիտակցական կյանքի ընթացքում կարողանում է իրականացնել իր առջեւ ծառայածը: Ռուսներն Սուրբերի Ղուկասին մեկն է այն նվիրյալներից, ով ջանք չի խնայել մեր դպրոցի կրթության զարգացման համար: Մանկավարժական գործունեությունը սկսել է 1970 թվականից՝ դպրոցի հիմնադրման օրվանից եւ աշխատել մինչեւ 2012թ.: Այդ տարիներին անդուլ ծառայել է մանկավարժի բարձր կոչմանը: Աշխատած տարիները եղել են բեղմն-

նավոր՝ հագեցած մանկավարժության եւ արվեստի հմուտ իմացությամբ: Մեծ է նրա վաստակը երեխաների մեջ արվեստի նկատմամբ սեր դաստիարակելու գործում: Նրա բազմաթիվ գեղանկարներ ցուցադրվել են եւ արժանացել մեծ գնահատանքի: Սամվելը այսօր էլ երախտագիտությամբ եւ անսահման սիրով

են հիշում ու գնահատում նրա անգուցական վաստակը: Որպես մեր կրթության ուսանավար (1978-2012թթ.)՝ մշտապես եղավ աշակերտների եւ երիտասարդ ուսուցիչների ընկերը, կերպարվեստի, գծագրության համբերատար, բարյացակամ եւ լայնասիրտ ուսուցիչը: Կապանի N7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը հղում է իր բարեմարտանքները սիրելի ընկեր Ղուկասին: Թող բացվող յուրաքանչյուր առավոտի հետ նրան մշտապես ուղեկցեն բարին, գեղեցիկը: Թող ապրի երկար՝ մտքով իմաստուն, հոգով՝ երիտասարդ:  
**Կապանի N7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

## «Մի սիրո պատմություն»

**ԳՐԻԻ ԾՆՈՐՀԱՆՆԵՍ**

Վերջերս հանրապետության վետերանների միությունում տեղի ունեցավ երկրորդ աշխարհամարտի ակտիվ մասնակից, մարտական ծառայությունների համար մի քանի շքանշանների եւ մեդալների արժանացած Արտավազդ Մաթեոսյանի «Մի սիրո պատմություն» գրքի շնորհանդեսը: Վեպն իրական հենքի վրա հյուսված մի պատմություն է, որն ընթերցվում է հետաքրքրությամբ: Գրքում նկարագրված գործողությունների մի մասը տեղի է ունենում Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Միջոցառումը կազմակերպվել էր պոեզիայի եւ արձակի մեծ սիրահար, ՀՀ վետերանների միության նախագահ Սիմոն Եսայանի անմիջական նախաձեռնությամբ եւ նվիրված էր հոբելյարի մեծարմանը, ում 90-ամյակը նոր էր լրացել: Հոբելյանի առթիվ հուշանվերով հոբելյարին էին այցելել ՀՀ ազգային ժողովի պատգամավորների խումբը՝ խորհրդարանի նախագահի տեղակալ Հերմինե Նաղդալյանի ղեկավարությամբ, Շենգավիթի համայնքապետ Արմեն Սարգսյանը, տեղական վետերանական կազմակերպության խորհրդի նախագահ Յուրի Ազգարյանը:



Իսկ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն իր վերաբերմունքն արտահայտեց նրանով, որ Արտավազդ Մաթեոսյանին հրավիրեց պաշտպանության նախարարություն, շնորհավորեց հոբելյանի առթիվ, նրան նվիրեց Հայաստանի զինված ուժերի մասին իր հեղինակած գիրքը եւ դրամական պարգև:  
«Մի սիրո պատմություն» գրքի հեղինակը նկարագրում է ֆաշիստների դեմ մղած ծանր մարտերը, «լեզու» բռնելը, պատմում էրեք խիված տանկի, խորհրդային Միության տարբեր ազգության զինվորների բարեկամության մասին, ովքեր միասին իրենց ուսերին տարան պատերազմի դժվարությունները եւ չարչարանքները: Գրքում է կան մասին, թե ինչպես էին սնվում մի կաթսայից, խրամատում կիսում մի պատառ հացը:  
Հետաքրքրական ու հարուստ է 90-ամյա վետերանի կյանքը: Նա ծնվել է բարձրադիր Քաջարան գյուղում: 304-րդ ժողովրդական հրաձգային դիվիզիայի 560-րդ հրետանային գնդի կազմում մարտական երկար ուղի է անցել: Ազատագրել է Կուբանի Սլավյանսկը, Թամանը, Տեմրյուկը, քաղաքներ՝ Ուկրաինայում եւ Լեհաստանում, նվաճել Բեռլինը: Հասկանալի հպարտանում է «խիզախության համար» երկու մարտական մեդալով, որոնցից մեկը Հայրենական մեծ պատերազմի երկ-

րորդ աստիճանի շքանշանի հետ պատերազմի ավարտից 37 տարի անց նրան հանձնել է խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Աշոտ Ղազարյանը:

Չորսըստվելով 1953 թվականին, Արտավազդ Մաթեոսյանն ընդունվեց Մոսկվայի էկոնոմիկայի ինստիտուտը: Երեք տարի ուսանելուց հետո ընտանեկան հանգամանքներից լեւելով՝ տեղափոխվեց Երևանի պետամալաբարան, որը հաջողությամբ ավարտեց 1958 թվականին: Մի քանի տասնամյակ աշխատանքային կենսագրություն է հյուսել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում:

Անկեղծությամբ եւ ջերմությամբ հոբելյարի եւ նրա գրքի մասին խոսեցին պատերազմի եւ աշխատանքի վետերանները եւ անմոռաց հանդիպման պատվավոր հյուրերը:

Դրվատանքի խոսքեր են ասել գրքի խմբագիր Ռոբերտ Թաթևոսյանը, տեսնիկական գիտությունների թեկնածու, ճարտարագետ-կիրթեմեծիկ Գեորգ Թափալալյանը, «Մշակույթ» հիմնադրամի անդամ ժամանա Շաքարյանը, աշխատանքի վետերան, մոտ քառորդ դար «Քաջարանին» տրեստի գլխավոր ինժեներ աշխատած Սեդրակ Ղազարյանը եւ ուրիշներ: Ամփոփելով հոբելյարի մեծարումը եւ գրքի քննարկումը՝ վետերանների միության նախագահ Սիմոն Եսայանն Արտավազդ Մաթեոսյանին համարեց պատվոգիր եւ դրամական պարգև: Միջոցառման ավարտին Արտավազդ Մաթեոսյանը երախտագիտություն հայտնեց ջերմ խոսքերի եւ անկեղծ գնահատականների համար, նաեւ շնորհակալություն հայտնեց հանրապետության վետերանների խորհրդի նախագահ Սիմոն Եսայանին՝ միջոցառումը կազմակերպելու համար:

**ՄԻԿԱՅԻԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ**  
**Պաշտոնաթող գնդապետ, ՀՀ վետերանների միության նախագահի պեղակալ**

# «Ա դե, խմել չգիտեք՝ չխմեիք, էլի...»

## ՄԻ ՀՈՒՇ

**1989 թվականի օգոստոսին ես եւ Սուսանը մեկնեցինք Մոսկվա՝ ամուսնական ճամփորդության: Գե, սովորի փորձերին ուղեգիր գրելն էր, բայց հեշտ չէր: Դա էլ Ֆաբրյաց Սուրոն էր դասավորել: Սուրոն էն ժամանակ Հայաստանի միակ փորձարարական կազմակերպության (բնականաբար՝ պետական) ներկայացուցիչն էր Մեդրիում: Մի խոսքով՝ երկշաբաթյա ուղեգիր էր՝ Մոսկվա, եթե չեմ սխալվում, Իգմայիլովի փորձարարական հյուրանոց: Երրորդ կամ չորրորդ օրն էր, Սուսանի հետ Արբարում գտնվում էինք ու հանկարծ.**

- Մու...

Հապտուն էր (չուղղեք, ես գիտեմ, որ Հապտե, Հապտեմակ է գրվում, ինքը մեր Հապտուն էր, մեր Հապուն):

Հապուն ավագ եղբորը՝ Գուրիկին (Գուրոյին) Մոսկվա էր բերել բուժման: Գուրուն աչքի պրոբլեմներ ուներ եւ պիտի հետազոտության եւ վիրահատության ենթարկվեր:

Ինչեւէ, ողջագուրվեցինք, դեսից-դենից խոսեցինք: Ես էլ պահին Արբարում իրենց նկարները վաճառող նկարիչներից մեկի գեղանկարն էի նայում: Աղջիկ էր էլ նկարիչը: Հապուն զգաց, որ էլ նկարը դուր է եկել ինձ: Ու երբ արդեն չորսով՝ ես, Սուսանը, Հապուն, Գուրուն հեռանում էինք Արբարից, որ զանք մեր հյուրանոց՝ նշելու հանդիպումը, Հապուն ասաց՝ «մի րոպե» ու հետ դարձավ: Քիչ հետո միացավ մեզ՝ իմ հավանած նկարով՝ իր ու նկարչուհու մա-

կագրությամբ.

Ինքը մակագրել էր. «Մետրոպիլն եւ Սուսիկին՝ այսօրվա առիթով»:

Նկարչուհին մակագրել էր. «На добрую память Месроп – от москвички Инессы» (Ինեսա Մատվեյեայի այդ՝ «Угол зрения» կոչվող նկարն այսօր էլ մեր տան պատից կախված է):

Մի խոսքով, եկանք հյուրանոց ու, բնական է, սկսեցինք... Ե՛հ ի՞նչ էր խմել: Սուսանը չէր խմում, Գուրուն չէր խմում՝ հաջորդ օրը բժշկի պիտի գնար, պրոցեդուրաներ պիտի ընդուներ, ես ու Հապուն կոնյակ էինք խմում, կարգին էլ զակուսկի չկար...

Գուրուն տեսավ, որ սրա վերջը լավ չի, ասաց՝ «Հապո, ես գնացի, քանի լույս է, գոնե հասնեն տուն»: Գնաց: Մի քիչ անհանգիստ էինք՝ ոնց պիտի գնա, լավ չի տեսնում,



Հապտեմակ Խաչիկյան

բայց քանի որ մետրոպոլ ուղիղ գծով հասնելու էր՝ հանգստացանք: Մնացինք երեքով, ու էլի ես ու Հապուն խմում ենք ու խմում, ձե՛ն-

Ներս գլուխներս ենք ցցել՝ երգում ենք Հապոյի երգերը, մեր Մեդրի երգը:

Շատ չերկարացնեմ. հարբեցողության արդյունքն էր՝ ամբողջ գիշեր Սուսանը երկուսիս մեջքն էր տրորում. հերթով վազում էինք զուգարան՝ գրկում կոնքը ու...

Ես, Սուսանն ու Հապուն ես դեպքը հա հիշում ու հա ծիծաղում էինք... Ու որ պատմում էինք, մանավանդ Սուսանը շատ զուսմավոր էր պատմում մեր գիշերային տվյալները, բոլորը ծիծաղում էին մեզ վրա.

- Ա դե, խմել չգիտեք՝ չխմեիք, էլի...

Այս ուրախ պատմության տխուր վերջաբանը. Ֆաբրյաց Սուրոն մահացել է մեկ տարի առաջ, Գուրուն մահացել է մոտ տասը տարի առաջ, Սուսանը մահացել է 2008 թվականի դեկտեմբերին, իսկ ընդամենը 5 օր առաջ էլ Հապուն մահացավ:

**ՄԵՏՐՈՊՈՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 21 հունվարի 2013թ.**

# ԳԱՌՆԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ

## ԽՈՍՔ ՀԻՇԱՍԱԿԻ

Գործը սգում է իր լավագույն գավակներից մեկի՝ Գառնիկ Սմբատի Միրզոյանի կորուստը:

Ծնվել է 1938թ. Խնձորեսկ գյուղում: Ավարտել է Գորիսի Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ, ապա Երեւանի պետական բժշկական ինստիտուտը՝ կարմիր դիպլոմով:

Աշխատանքային գործունեությունն սկսել է 1960թ. Գորիսի շրջանային հիվանդանոցում՝ աշխատելով դատական բժիշկ: Հետագայում նշանակվել է Գորիսի եւ Սիսիանի հիվանդանոցների դատական բժիշկ ու պոլիկլինիկայի վարիչ: 1982թ. նշանակվել է Գորիսի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ եւ շուրջ տասը տարի ղեկավարել ու կազմակերպել շրջանի առողջապահական համակարգի գործունեությունը: Այնուհետեւ աշխատել է Գորիսի եւ Սիսիանի ԲՍԳՅ նախագահ: 1996



թվականից մինչեւ կյանքի վերջն աշխատել է հանրապետական դատաբժշկական գիտահետազոտական կենտրոնի Սյունիքի մարզի դատաբժշկական փորձաքննության բաժնի գլխավոր փորձագետ եւ Գորիսի ԲԿ-ի ախտաբանաանատոմիական ծառայության պետ:

Աշխատանքային գործունեությանը զուգընթաց մշտապես զբաղվել է հասարակական գործունեությամբ: Ավելի քան տասնհինգ տարի եղել է բժշկական կենտրոնի արհմիության նախագահ: Բազմիցս ընտրվել է ՀԿԿ շրջկոմի անդամ,

շրջանային խորհրդի պատգամավոր, գործկոմի անդամ:

Բժշկի համար լինում են փորձության պահեր, երբ ժամանակն ու կյանքն են որոշում նրա անելիքը: Այդպես եղավ Արցախյան հակամարտության ընթացքում, երբ Գորիսի հիվանդանոցի ողջ անձնակազմի հետ իր առաքելությունն արժանապատվորեն կատարեց Գառնիկ Միրզոյանը:

Նրա նվիրումն ու ծառայությունը բազմիցս գնահատվեցին կառավարության, առողջապահության նախարարության, Սյունիքի մարզպետարանի կողմից: Լավագույն աշխատանքի համար պարգևատրվել է ՀԻՍՀ գերագույն խորհրդի պատվոգրով, արժանացել Խորհրդային Միության միութենական երկրորդ կարգի դիպլոմի, մի շարք մեդալների, պատվոգրերի եւ շնորհակալագրերի:

Գառնիկ Միրզոյանը միաժամանակ անմնացորդ նվիրված էր ընտանիքին, զավակներին, թոռներին:

Նրա հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների, շրջապատի մարդկանց ու բոլոր ճանաչողների սրտերում:

**«ԳՐԻՍԻ ԲԾՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

## «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է անսարք վիճակում գտնվող համակարգիչների, համակարգչային սարքավորումների եւ հասարակության առողջության մեկնարկային գներով:

N	Գույքի նկարագիրը	Չափանքային միավորներ	Միավորի քանակ	Գնահատված արժեքը (դրամ)
1	Պրինտեր HP-380F	հատ	4	5000
2	Մոնիտոր DAEWOO	հատ	1	5000
3	Կարգավորիչ UPS intel 800VA	հատ	1	2000
4	Մոնիտոր Miral LCD	հատ	1	5000
5	Մոնիտոր LG, w1942s LCD	հատ	1	8000
6	Լազերային տպիչ DOCU print P8ex	հատ	1	5000
7	Համակարգիչ Pentium 4, 2,8 GHz, intel chipset, 800 FSB, HDD 80 GB, RAM 256 MB, Video 128 MB, FDD Nic, CD_RW, MOUSE	հատ	1	20000
8	Համակարգիչ Pentium 4, GENX 3,0 GHz, RAM 512MB, DDR, 80 CD, HDD, Combo, FDD	հատ	1	25000
9	Մոնիտոր Cenx-17 LCD	հատ	1	5000
10	Մոնիտոր Cenx SMV_745 A LCD	հատ	1	5000
11	Մոնիտոր Cenx CMV 745	հատ	1	5000
12	Մոնիտոր Orange-17, flatuT	հատ	2	10000
13	Կարգավորիչ UPS intel 800VA	հատ	1	2000
14	Լաբորատոր սարք	հատ	1	5000
15	Համակարգիչ Pentium 4, 2,8GHz,intel chipset,800 FSB,HDD 80 GB,RAM 256 MB, Video color64 MB,FDD Nic, CD_RW, KB, MOUSE	հատ	1	30000
16	Սկավառակակիր	հատ	1	3000
17	Մոնիտոր 15 Samsung syuc master 551s	հատ	1	5000
18	Մոնիտոր 15 Samsung syuc master 3N	հատ	1	10000
19	Ստեղծագործ, մկնիկ, կոշտ սկավառակ HDD 40 GB ,CDROM, FLOPPY Ppor, CPU celeron1,7 GHzoph, ramDDR 256 Mb	հատ	1	15000
20	Համակարգիչ P-4 3000 524, RAM 512 MB, HDD 80Gb, FDD Sony DVD RW, NEC 7173	հատ	1	30000
21	Մոնիտոր Cenx-17 LCD	հատ	1	5000
22	Speakers F120, dinamik	հատ	1	500
23	UPS 500, transformator	հատ	1	1000
24	Մոնիտոր15,P-3 800mhz,256Mb.HDD 20GB-CB_CD	հատ	1	10000
25	Պրինտեր DeskJet 84C	հատ	1	3000
26	Համակարգիչ P-4 3000 524, RAM 512 MB, HDD 80Gb, FDD Sony DVD RW, NEC 7173	հատ	1	25000
27	Համակարգիչ P-4, 3,0 Ghz, LGA ram 512 Mb, DDR, HDD 80 Gb, RDD Cambjo GDD	հատ	1	15000
28	Հաստոց գալիկոնային	հատ	1	70000
29	Հաստոց Ֆուգան	հատ	1	90000

Աճուրդը կկայանա 2013թ. մարտի 1-ին ժամը 14:00-ին, ԳՊՀ-ի թիվ 1 մասնաշենքում: Աճուրդի մասին տեղեկատվություն կարող եք ստանալ համալսարանի հաշվապահությունից (հեռ. 2 06 91)

**Աճուրդային հանձնաժողով**

**Սյունյաց երկիր**  
S Y U N I A C Y E R K I R

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՍՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ**

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:  
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:  
**Էլ. փոստ՝** syuniacyerkir@mail.ru  
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am


Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

**«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ»** բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՌՆՁԱՆԻ ՏԱԿ ԵՎ ԳՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒՅԵՐ:

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 29.01.2013թ.:



**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը խորը վշտով ցավակցում է Անահիտ Ամիրջանյանին (Կապան) եղբոր՝ Աշոտ Ամիրջանյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը վշտացած է Գայանե Բաղդասարյանի քեռու՝ Մերսիկ Ավանեսյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում է նրան ու հանգուցյալի մյուս հարազատներին:

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» խմբագրականը վշտացած է Մեդրո պետական քոլեջի տնօրեն Հապտեմակ Խաչիկյանի վաղաժամ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է նրա ընտանիքի անդամներին ու քոլեջի մանկավարժական, ուսանողական կոլեկտիվներին: